ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1965 Общественные науки

Ա. Ա. Սաղաթյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՆՈՐ ՄԱՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանի հիմնական խնդիրներից մեկը նոր մարդու բազմակողմանի դաստիարակությունն է։ Կոմունիզմի դարաշրջանի մեքենայացված և ավտոմատացված արտադրություն պահանջում է բազմակողմանի զարգացած, արտադրական բարձր որակավորում ունեցող, ժամանակակից գիտության և տեխնիկային լավատեղյակ կադրեր։ Կոմունիստական հասարակարգում արտադրողական ուժերի աճին զուգընթաց բազմակողմանիորեն զարգանում է նաև այդ ուժերը շարժման մեջ դնող մարդը։

Սոցիալիստական արտադրահարաբերությունների աստիճանական վերաձևումը կոմունիստականի, իսկ սոցիալիստական պետականությունը՝ կոմունիստական հասարակական ինքնավարության, տեղի է ունենում մարդկանց համակողմանի զարգացմանը զուգընթաց։ Բանվոր-ծառայողների կուլտուրական մակարդակի բարձրացման շնորհիվ բարձրանում է նաև նրանց արտադրական գործունեության մակարդակը և ընդհակառակը արտադրական գործունեության ակտիվացումը, ստեղծագործական աշխատանքը որոշող դեր են կատարում մարդկանց դաստիարակման, նրանց հոգևոր զարգացման գործում։

Սակայն մարդը աշխատանքի նկատմամբ իր վերաբերմունքը ցույց է տալիս տարբեր ձևով. աշխատել անհրաժեշտաբար, աշխատել հարկադրաբար և աշխատել հաճույք ստանալու համար։ Ստեղծագործական աշխատանքը կամավոր աշխատանք է։ Վ. Ի. Լենինը բնութագրելով կոմունիստական աշխատանքը ընդգծել է նրա բնորոշ առանձնահատկությունները, առաջինը՝ կամավոր, երկրորդը՝ առանց վարձատրության, երրորդը՝ որպես սովորություն, չորրորդը՝ աշխատանքը որպես առողջ օրգանիզմի պահանջ[1]։

Կամավոր աշխատանքի պահանջն է, որ սովետական մարդուն մղում է գործելու հասարակական կոնստրուկտորական, տնտեսական վերլուծության բյուրոներում ու խմբերում, ռացիոնալիզատորների և նորարարների խորհուրդներում և հասարակական հիմունքներով գործող այլ ինքնագործ կազմակերպություններում։

Աշխատանքում են հանդես գալիս մարդկանց ստեղծագործական ակտիվությունը, նախաձեռնությունը, դեպի առաջ գնալու ձգտումները։ Այժմ դժվար է գտնել մի ձեռնարկություն, որտեղ բանվորները չկատարեն իրենց պլանային առաջադրանքները։ Ընդհակառակը, արտադրության մեջ աշխատող բանվորը հանգիստ չի կարող լինել, եթե տվյալ աշխատանքային օրում չգերակատարի իր առաջադրանքը։ Պլանային առաջադրանքները գերակատարելը, արտա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 661։

դրության կազմակերպումը կատարելագործելը, աշխատանքի բարձր արտադրողականության հասնելը, արտադրական պրոցեսները մեքենայացնելը և ավտոմատացնելը իրենց վառ արտահայտությունն են գտնում ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման մեջ։ Այդ շարժումը ղեկավարում են հասարակական կազմակերպությունները՝ ռացիոնալիզատորների և գյուտարարների բյուրոները, գիտատեխնիկական ընկերություններն ու նրանց սկզբնական կազմակերպությունները։

Մարդկանց դաստիարակման, նրանց արտադրական ակտիվության բարձրացման հիմնական երաշխիքն են հանդիսանում գիտելիքների տիրապետումը, կուլտուրական մակարդակի, արտադրական որակավորման բարձրացումը։ «Աշխատանքը,—գրել է սովետական մեծագույն մանկավարժ Ա. Ս. Մակարենկոն,—առանց կրթության, առանց քաղաքական և հասարակական դաստիարակության դաստիարակչական արդյունք չի բերի, կհանդիսանա չեզոք պրոցես։ Դուք կարող եք մարդուն ստիպել ինչքան կարող է աշխատել, բայց եթե դրա հետ միաժամանակ դուք նրան քաղաքականապես և բարոյապես չդաստիարակեք, եթե նա չմասնակցի հասարակական և քաղաքական կյանքին, ապա այդ աշխատանքը առհասարակ կլինի դրական արդյունք չտվող չեզոք պրոցես»[2]։

Կոմունիզմի կառուցումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների ստեղծումը հնարավոր է միայն մարդկանց կրթական մակարդակի բարձրացման հիման վրա, առանց որի, ինչպես ընդգծել է Վ. Ի. Լենինը, կոմունիզմը կդառնա սոսկ ցանկություն։ «Ձեր առաջ ծառացած է ամբողջ երկրի տնտեսական վերածնման, թե՛ հողագործության և թե՛ արդյունաբերության վերակազմակերպման, վերականգնման խնդիրները ժամանակակից տեխնիկայի հիմքի վրա, որը խարսխված է ժամանակակից գիտության, տեխնիկայի, էլեկտրականության վրա... Միայն ժամանակակից կրթության հիման վրա (երիտասարդություն—Ա. Ս.) կարող է այդ ստեղծել և եթե նա չունենա այդ կրթությունը, կոմունիզմը միայն ցանկություն կմնա»[3]։

Մեր երկրում տարեցտարի ավելանում է սովորողների, հատկապես առանց արտադրությունից կտրվելու սովորողների թիվը։ Աղյուսակում բերվում է մեր հանրապետությունում 1959—1964 թվականներին բոլոր տիպի ուսումնական հաստատություններում սովորողների աճի մասին տվյալները։

Բացի բերված տվյալներից 150 հազար մարդ քաղաքական, էկոնոմիկական գիտելիքներն են բարձրացնում կուսակցական լուսավորության ցանցի տարբեր օղակներում, ժողովրդական համալսարաններում և այլ դասընթացներում։ Այսպիսով, մեր հանրապետությունում սովորողների թիվը 1964 թ. հասնում էր ավելի քան կես միլիոնի, որը կազմում է ամբողջ բնակչության մոտ 31 տոկոսը։

Հատկապես լուրջ ուշադրություն է դարձվում պոլիտեխնիկական ուսուցմանը։ Այդ նպատակին է ուղղված նաև «Դպրոցի կապի ամրապնդումը կյանքի հետ» ՍՍՌՄ Գերագույն սովետի օրենքը, որը հնարավորություն է տվել յոթնամյակից անցնելու ութամյա պարտադիր ուսուցմանը, ամրապնդել ուսուցման կապը արտադրական աշխատանքի հետ։

---

2 Макаренко А. С., Соч. т. 5, стр. 116.

3 Նույն տեղում։

Սովորողների թիվը ըստ ուսման տեսակների
(Ուսումնական տարվա սկզբի տվյալներով)[4]

	1959—1960	1960—1961	1961—1962	1962—1963	1963—1964
Ընդամենը սովորում են այդ թվում	347.229	377.465	415.558	465.008	512.742
Բոլոր տիպի հանրակրթական դպրոցներում . .	311.584	337.902	369.412	411.151	450.471
Տարրական, յոթնամյա, ութամյա և միջնակարգ դպրոցներում	296.052	319.088	348.435	386.630	423.755
Բանվորական, գյուղական երիտասարդների, մեծահասակների դպրոցներում (հաշված հեռակա ուսուցումը)	15.532	18.814	20.977	24.521	26.716
Պրոֆտեխնիկական կրթության ուսումնարաններում և դպրոցներում	2861	4590	6230	7849	10.046
Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում	13.681	14.808	17.814	20.074	23.115
Բարձրագույն ուսումնական հաստատություններում	19.103	20.165	22.102	25.935	29.110

Ելնելով դրանից, մեր կուսակցությունը հետևողականորեն վերակառուցում է ժողովրդական կրթության սիստեմը, ամրապնդում է սերտ կապը ուսման և կյանքի, արտադրության և կոմունիստական հասարակության շինարարության պրակտիկայի միջև։ Այդ խնդիրների իրականացման համար մեր հանրապետությունում տարեցտարի ավելանում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտած մասնագետների թիվը։ 1963 թ. տվյալներով հանրապետության ժողովրդական տնտեսությունում բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը հասնում էր ավելի քան 50 հազարի։

ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան (1963) պլենումը լուրջ ուշադրություն դարձրեց աշխատանքային դաստիարակության վրա, ընդգծելով, որ գաղափարական աշխատանքի սիրտը հանդիսանում է աշխատանքային դաստիարակությունը, որի հիմքում դրված է աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրը։ Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքներ, ունակություններ։ Պլենումը նոր ուժով ընդգծեց գաղափարական-դաստիարակչական աշխատանքի և կոմունիստական շինարարության պրակտիկ խնդիրների անխզելի միասնությունը, առաջին հերթին սերտ կապը նյութական արտադրության, աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ։ Ներկա էտապում կուսակցության գաղափարական աշխատանքի գլխավոր խնդիրը կայանում է նրանում, որպեսզի գաղափարապես ապահովեր ՍՄԿՊ

[4] Народное хозяйство Армянской ССР в 1963 г., статистический сборник, стр. 221.

ծրագրի կենսագործումը, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորումը։

Անդրադառնալով նոր մարդու բազմակողմանի դաստիարակման խնդրին, չի կարելի անտեսել այն հսկայական դերը, որ կատարում են ժողովրդական համալսարանները, որոնք հանդիսանում են կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում սովետական ժողովրդի կուլտուրայի ծաղկման յուրօրինակ երևույթներից մեկը։ Պատմության մեջ ժողովրդական համալսարանների մենք հանդիպում ենք չորրորդ անգամ։ Առաջին անգամ ժողովրդական համալսարանները և դպրոցները հանդես են եկել ավելի քան 100 տարի առաջ։ Նրանց կազմակերպիչներն էին լուսավորիչները, որոնք գրագիտություն և հաշվի հիմունքներ էին սովորեցնում ժողովրդին։ Անցյալ դարի 90-ական թվականներին ռուսական մարքսիստները ժողովրդական համալսարաններն օգտագործում էին որպես լեգալ պայքարի ձև՝ սոցիալիզմի գաղափարները բանվորական շարժման մեջ մտցնելու համար։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո նոր հեռանկարներ բացվեցին ժողովրդական համալսարանների առջև։

Ժողովրդական համալսարանները վերածնվեցին և նոր բովանդակություն ստացան կոմունիզմի ծավալուն կառուցման ներկա ժամանակաշրջանում, հատկապես ՍՄԿՊ XXI համագումարի նախօրյակին։ Սկզբնական շրջանում հիմնվեցին կուլտուրայի, տեխնիկական առաջադիմության, գյուղատնտեսական գիտելիքների համալսարաններ, այնուհետև գիտելիքների տարբեր բնագավառների գծով՝ մանկավարժության, միջազգային հարաբերությունների, էկոնոմիկայի, սովետական առևտրի, իրավունքի, բժշկության, աթեիզմի և այլն։ Այժմ մեր երկրում գործում են մոտ 10 հազար ժողովրդական համալսարաններ, որոնցում սովորում են գրեթե 2 միլիոն մարդ։ Ավելի քան 120 հազար մասնագետներ իրենց գիտելիքներն են հաղորդում այդ համալսարաններում ընդգրկված աշխատավորներին։ Ժողովրդական համալսարանների կամարների տակ դասախոսում են 9 հազար ակադեմիկոսներ, ակադեմիայի թղթակից-անդամներ, գիտության դոկտորներ ու թեկնածուներ, պրոֆեսորներ ու դոցենտներ, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների 16 հազար դասախոսներ, 32 հազար դասատուներ, 21 հազար բժիշկներ, գրականության և արվեստի 11 հազար աշխատողներ և 17 հազար այլ մասնագետներ[5]։

Հարց է առաջանում. ի՞նչ անհրաժեշտություն կա այժմ, ստեղծել ժողովրդական համալսարաններ, երբ բանվորների 44 տոկոսը և կոլտնտեսականների ավելի քան 26 տոկոսը ունեն լրիվ և ոչ լրիվ բարձրագույն ու միջնակարգ կրթություն։ Բանը նրանումն է, որ այժմ սովետական ժողովուրդը ձգտում է ավելի շատ գիտելիքներ ձեռք բերել։ Կոմունիզմի կառուցումը անիմաստ է առանց բնության ու հասարակության զարգացման հիմնական օրինաչափություններին տիրապետելու։ Ժողովրդական համալսարանների առաջացումն ու զարգացումը կապված է ժողովրդի ձգտումների դրսևորումների հետ՝ տիրապետել գիտությանը, տեխնիկային, արվեստին։ Ժողովրդական համալսարանները հանդիսանում են մասսաների կոմունիստական աշխար-

5 «Коммунист», № 15, 1964, стр. 70.

6 Նույն տեղում։

հայացքի ձևավորման կենտրոններ, աշխատավորության կրթության կարևոր ձև, մարդկանց բազմակողմանի զարգացման, նրանց աշխատանքային, դաստիարակական, էսթետիկական, ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկը։ Ժողովրդական համալսարանների աշխատանքում նկատվում է մի նոր, կարևոր գիծ՝ դա այն է, որ վերջին ժամանակներս մի շարք համալսարաններ ձգտում են ունկնդիրներին տալ լրացուցիչ մասնագիտություն։ Շատ ունկնդիրներ ձեռք են բերում դրագարանավարի, էքսկուրսավարի, սանիտարական տեսուչի, գեղարվեստական ինքնագործունեության խմբերի ղեկավարի մասնագիտություն։

Ժողովրդական համալսարանների ղեկավարությունն իրականացվում է դեմոկրատական հիմունքներով։ Այդ համալսարանները ղեկավարող 8 հազար հասարակական խորհուրդների աշխատանքին մասնակցում են 60 հազար ակտիվիստ-էնտուզիաստներ։

Մեր հանրապետությունում ներկայումս գործում են 128 ժողովրդական համալսարաններ, որոնցում ընդգրկված են 14 հազար ունկնդիրներ, կոմունիստական աշխատանքի 106 դպրոցներ՝ 2071 սովորողներով, 138 պոպուլյար լեկտորիումներ, որոնց ունկնդրում են 6418 մարդ։ Բացի դրանից հանրապետության տարբեր գերատեսչություններում գործում են ավելի քան 100 ժողովրդական համալսարաններ (քիմիայի, գյուղատնտեսության, առողջապահության, իրավաբանության, արվեստագիտության, գիտա-աթեիստական և այլն)։ Այնտեղ դասավանդում են հանրապետության ականավոր գիտնականներ, գրականության, արվեստի գործիչներ, բժիշկներ, ինժեներներ, տրնտեսագետներ, փիլիսոփաներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորներ, դոցենտներ, ուսուցիչներ[8]։

1960 թ. հոկտեմբերի 16-ին ՀԿՊ Լենինյան շրջկոմի բյուրոյի որոշմամբ սկսել է գործել տեխնիկական առաջադիմության համալսարանը, որն ունի 9 ֆակուլտետ՝ քիմիական, էլեկտրատեխնիկական, մեքենաշինական և հաստոցաշինական, տրանսպորտի, տեքստիլ արդյունաբերության, կաշվի արդյունաբերության, փայտամշակման, շինարարության։ Այս 9 ֆակուլտետներում ընդգրկված են 300 հոգի (կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների քարտուղարներ, ձեռնարկությունների դիրեկտորներ, գլխավոր ինժեներներ, արտադրամասերի և բաժինների պետեր, ֆաբրիկա-գործարանային արհմիութենական կոմիտեների նախագահներ, առաջավոր բանվորներ)։ Համալսարանի ռեկտորն է հայմեքենաշինության գիտա-հետազոտական ինստիտուտի դիրեկտոր Վ. Ալեքսեևսկին, պրոռեկտորը՝ ՀԿՊ Լենինյան շրջկոմի գաղափարական աշխատանքի բաժնի վարիչ Ս. Միրզոյանը։ Ֆակուլտետների դեկաններ են հաստատված մի շարք ձեռնարկությունների ղեկավարներ։ Պարապմունքներն անց են կացվում ամսեկան երկու անգամ, աշխատանքից հետո։

Լսելով բովանդակալից դասախոսություններ ու զեկուցումներ, մասնակցելով սեմինարներին և պրակտիկ պարապմունքներին, որոնք անց են կացվում անմիջապես տվյալ բնագավառի ձեռնարկություններում, համալսարանի ունկնդիրները տեսական գիտելիքները համտորեն զուգակցելով պրակտիկայի

7 ՀԿՊ Կենտկոմի գաղափարական աշխատանքի բաժնի բնթացիկ արխիվ։

8 «Սովետական Հայաստան», 18 դեկտեմբերի, 1964 թ.։

ՀԱՍԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

հետ, կատարելագործում են արտադրության ղեկավարման մեթոդները, ժամանակին լիկվիդացնում արտադրության նեղ տեղերը, ընդօրինակում և տարածում աշխատանքի առաջավոր մեթոդները։

Համալսարանի կաշվի և կոշիկի արդյունաբերության ֆակուլտետի հերթական պարապմունքներից մեկում լսվել է N 1 կոշիկի ֆաբրիկայի դիրեկտոր Մ. Սոնցի և կաշվի գործարանի դիրեկտոր Ս. Գասպարյանի զեկուցումները՝ «Կոշիկի ամրացման նոր մեթոդները» և «Նոր տեխնոլոգիան կաշվի գործարանում» թեմաների մասին։ Այդ ձեռնարկություններում անցկացված պրակտիկ պարապմունքներից հետո ֆակուլտետի ունկնդիրներ Տեր-Գրիգորյանի, Կիրակոսյանի, Արմաղանյանի և դասախոս, Ս. Մ. Կիրովի անվան գործարանի աշխատակից Ի. Բոշնյակովի համագործակցությամբ մշակվել և ներդրվել է կոշիկի արդյունաբերության մեջ նոր սոսինձ, որի համար հումք է ծառայում նույն գործարանում արտադրված լատեքսը։

ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1963) և փետրվարյան (1964) պլենումների որոշումները լայն հնարավորություններ են ստեղծել մեր երկրի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար։ Այդ որոշումների կենսագործմանը մեծ չափով նպաստում են աշխատավորների ինքնագործ կազմակերպությունները։ Հանրապետության ձեռնարկություններում, շինարարություններում, սովխոզներում ստեղծված են գիտատեխնիկական ընկերության (ԳՏԸ) 710 սկզբնական կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են 27 հազար ինժեներներ, տեխնիկներ, արտադրության առաջավորներ, մասնագետներ։ ԳՏԸ-ի հանրապետական խորհրդի 210 կազմակերպություններ իրենց վրա են վերցրել ձեռնարկությունների տեխնիկական խորհուրդների ֆունկցիաները։

Կադրերի տնտեսական գիտելիքները հարստացնելու, արտադրության կազմակերպման նոր մեթոդներին ու ձևերին նրանց ծանոթացնելու, առաջավոր տեխնիկային ու տեխնոլոգիային հաղորդակից դարձնելու, ձեռնարկությունների տեխնիկական զինվածությունը բարելավելու նպատակով հանրապետությունում հասարակական հիմունքներով գործում են արտադրության առաջադիմության, նոր տեխնիկայի ժողովրդական համալսարաններ, հասարակական ասպիրանտուրաներ և այլ ինքնագործ կազմակերպություններ։

Տեխնիկայի հանրապետական տանը հասարակական հիմունքներով 1960 թ. գործում է Ժողտնտխորհի և ՀԱՄԽ-ի նոր տեխնիկայի համալսարանը, որը բաղկացած է չորս ֆակուլտետից՝ արտադրության ավտոմատացման, շինարարական ինդուստրիայի, գյուղատնտեսության մեքենայացման և տեխնիկական նորարարության։ Համալսարանի ռեկտորն է ակադեմիկոս Մ. Կասյանը։ Հասարակական հիմունքներով գործող այս ուսումնական հաստատությունում սովորում են ավելի քան 900 բանվորներ, ծառայողներ, ինժեներատեխնիկական աշխատողներ, կոլտնտեսությունների, սովխոզների մեխանիզատորներ։ 1963 թ. հունիսին համալսարանը տվել է իր առաջին շրջանավարտները։ 140 ունկնդիրներ հաջողությամբ ավարտելով ուսումնական ծրագիրը, հարուստ գիտելիքներ են ձեռք բերել իրենց ընտրած մասնագիտության գծով։ Նրանցից յուրաքանչյուրը կատարել է դիպլոմային աշխատանք կապված արտադրական այն տեղամասի հետ, որտեղ նա աշխատում է։ Օրինակ, Անիի շրջանի Քարաբերդ գյուղի տրակտորիստների բրիգադիր Ս. Ալեքսանյանի դիպլոմային աշխատանքի թեման էր «Ցորենի ցանքսի և բերքի հա-

վաքման մեքենայացումը», «Ավտոմատիկա» գործարանի մեխանիկ Ա. Գուլիկյանները՝ «ԳԱԶ—54 մարկայի ավտոմերենայի ձևորի արդիլակիչների նոր էֆեկտիվ մեթոդները», «Հայջրնախագիծ» ինստիտուտի ինժեներ Գ. Հովհաննիսյանները «Պղնձյա շինարարական նյութերի ռացիոնալ օգտագործումը հիդրոէլեկտրաշինարարությունում» և այլն։ Դիպլոմային աշխատանքներում կան շատ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք հանձնվել են համապատասխան ձեռնարկություններին արտադրության մեջ ներդնելու համար։

Արտադրամասերի ծանրաբեռնվածության, փորձնական լաբորատորիայի բացակայության պատճառով Երևանի կոմպրեսորների գործարանում տարիներ շարունակ ձգձգվում էր ռացիոնալիզատորական և գյուտարարական շատ առաջարկների ներդրումը արտադրության մեջ։ Բավական է ասել, որ 1961 թ. ընդունված առաջարկների միայն 29 տոկոսն էր ներդրվել, իսկ 1962 թ. առաջին եռամսյակում՝ միայն 17 տոկոսը։ Հասարակական կոնստրուկտորական բյուրոյում կուտակվել էին արտադրության մեջ ներդրման համար մշակված մեծ քանակությամբ ռացիոնալիզատորական առաջարկներ։ Բանվոր ռացիոնալիզատորներից շատերը այդ հարցով անընդհատ անհանգստացնում էին գործարանի ադմինիստրացիային։ Միմյանց հետ կարծիքներ փոխանակելուց հետո, նրանք որոշեցին այդ գործը կատարել հասարակական կարգով։ Այդ միտքը կայծակի արագությամբ տարածվեց արտադրամասից-արտադրամաս, բրիգադից-բրիգադ։ Գործարանի դիրեկցիան, կուսակցական, արհմիութենական կազմակերպությունները, ռացիոնալիզատորների և գյուտարարների բյուրոյի, գյուտարարության ու ռացիոնալիզատորության հանրապետական ընկերության սկզբնական կազմակերպության հետ միասին մանրամասն քննարկեցին բանվորների առաջարկը և օգնեցին նրանց գործարանում ստեղծելու հասարակական հիմունքներով արտադրամաս։ Այդ որոշումը հավանության արժանացավ գյուտարարության ու ռացիոնալիզատորության հանրապետական ընկերության խորհրդի և մեքենաշինության ու հաստոցաշինության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի կողմից։ Հասարակական արտադրամասի «հաստիքը» շուտով լրացավ գործարանի լավագույն աշխատողներով (փականագործ Ջավեն Ստամբոլցյան, ֆրեզողներ Հովհաննես Մեսրոպյան, Արամ Բաղիկյան, խառատներ Ստեփան Քյուրքչյան, Գևորգ Դանիելյան, զոդող Սերյոժա Հակոբյան, մոդելիստ Հակոբ Առաքելյան և շատ ուրիշ էնտուզիաստ բանվորներ)։ Հասարակական արտադրամասի պետ ընտրվեց գործարանի առաջավոր բանվոր, դարբին Երջանիկ Առաքելյանը։ Արտադրամասի կազմը մինչև 1962 թ. հոկտեմբերը արդեն հասնում էր 17 հոգուն։

Ինչպիսի՞ կազմակերպական, իրավական և տնտեսական սկզբունքներով է գործում հասարակական հիմունքներով արտադրամասը։ Այդ սկզբունքները մանրամասը շարադրված են գործարհկոմի նախագահ Յու. Ղազարյանի և ռացիոնալիզատորական ու գյուտարարական բյուրոյի նախագահ է. Թաթունցի կողմից 1962 թ. հոկտեմբերի 10-ին հաստատած հասարակական հիմունքներով արտադրամասի կանոնադրության մեջ[9]։

---

9 Տե՛ս ռացիոնալիզատորական առաջարկների ներդրման հասարակական հիմունքներով արտադրամասի կանոնադրությունը։

Ռացիոնալիզատորական առաջարկների ներդրման հասարակական արտադրամասը ինքնուրույն արտադրական կազմակերպություն է, կոմպլեկտավորված տարբեր մասնագիտությունների գծով բարձր որակավորում ունեցող բանվորներից։ Արտադրամասի դեկավարությունը հասարակական հիմունքներով իրականացնում են արտադրամասի պետը, տեխնոլոգը և տնտեսագետը, որոնք ընտրվում են կոլեկտիվի կողմից և հասարակական կոնստրուկտուրական բյուրոն։ Արատադրամասը ենթարկվում է ռացիոնալիզատորական ու գյուտարարական բյուրոյին, գյուտարարների և ռացիոնալիզատորների հանրապետական ընկերության գործարանի սկզբնական կազմակերպությանը, որոնք նույնպես գործում են հասարակական հիմունքներով։

Կանոնադրության համաձայն հասարակական արտադրամասը կոմպլեկտավորում է արտադրական բրիգադներ այն բանվորներից, որոնց մասնագիտությունը համընկնում է տվյալ ռացիոնալիզատորական առաջարկի ներդրման հետ կապված տեխնոլոգիական աշխատանքների կատարմանը։ Արտադրամասի կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ տվյալ ռացիոնալիզատորական առաջարկի ներդրման հետ կապված աշխատանքները կատարում է այն հաստոցի վրա, որը ենթակա չէ հերթափոխին հանձնելու, և, որպես կանոն, աշխատանքային ժամերից դուրս։ Խիստ անհրաժեշտության դեպքում միայն, այն կարող է կատարել հիմնական աշխատանքի ժամանակ, ձեռնարկության գլխավոր ինժենների թույլտվությամբ։ Հասարակական արտադրամասը սկսել է գործել 1962 թ. հոկտեմբերից, սակայն նրա աշխատանքները միանգամից չընթացան նորմալ կերպով։ Սկզբնական շրջանում եղան նաև դժվարություններ, որոնք, սակայն, կարճ ժամանակում հաղթահարվեցին միաձույլ կոլեկտիվի ընդհանուր ջանքերով։ Արդեն 1962 թ. երկրորդ կիսամյակում գործարանի ռացիոնալիզատորական առաջարկների ներդրման պլանի կատարման ցուցանիշը տարվա սկզբի 17 տոկոսից բարձրացավ 126-ի, իսկ տնտեսական էֆեկտիվության պլանը՝ 137 տոկոսի[10]։ Հասարակական արտադրամասի միջոցով ռացիոնալիզատորական առաջարկների ներդրումից գործարանը տարեկան ստանում է 50 հազար ռուբլու օգուտ։

Երևանի կոմպրեսորների գործարանի կոլեկտիվի հայրենասիրական նախաձեռնությունը լայն արձագանք գտավ մեր հանրապետությունում։ Կոմպրեսորագործների օրինակով հասարակական արտադրամասեր կազմակերպվեցին Լենինականում, Կիրովականում և այլ քաղաքներում։ Այժմ մեր հանրապետությունում գործում են 34 հասարակական հիմունքներով արտադրամասեր։

Ռացիոնալիզատորական ու գյուտարարական բյուրոների, գիտա-տեխնիկական ընկերությունների և այլ հասարակական կազմակերպությունների լավագույն աշխատանքի շնորհիվ բարձրանում է բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, ակտիվությունը։ Նրանք իրենց առաջարկներով նպաստում են աշխատատար պրոցեսների մեքենայացմանը և ավտոմատացմանը, արտադրության մեջ առաջավոր մեթոդների ներդրմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արտադրանքի աճին։

---

10 Տե՛ս կոմպրեսորների գործարանի գործարհկոմի ընթացիկ արխիվ, հասարակական արտադրամասի վերաբերյալ ինֆորմացիա։

Վ. Ի. Լենինը հսկայական նշանակություն էր տալիս հասարակության ընդհանուր գործին աշխատավորական լայն մասսաների ընդգրկմանը։ Դրանում մեծ առաջնորդը տեսնում էր կոմունիստական ապագա հասարակության ծիլերը։ «Մեր նպատակն է,—նշում է Վ. Ի. Լենինը,—որ յուրաքանչյուր աշխատավոր անվճար կատարի պետական պարտականությունները՝ արտադրողական աշխատանքի 8-ժամյա «դասը» վերջացնելուց հետո, դրան անցնելն առանձնապես դժվար է, բայց այս անցման մեջ է միայն սոցիալիզմի վերջնական ամրապնդման երաշխիքը»[11]։

Այս տեսակետից հատկանշական են մեր կյանքի բոլոր բնագավառներում հանդես եկած հասարակական աշխատանքի ձևերն ու մեթոդները, աշխատանք, որ հասարակության անդամները կատարում են մեծ սիրով։

Իջևանի կուլտուրայի տանը հասարակական հիմունքներով ստեղծվել է բուժքույրերի դպրոց, որտեղ սովորում են 50 բանվորուհիներ ու ծառայողներ։ Դպրոցում դասավանդելու ցանկություն են հայտնել տեղի հիվանդանոցի և պոլիկլինիկայի բժիշկներ Մ. Հովսեփյանը, Զ. Ակունցը, Ռ. Աստվածատրյանը, Ռ. Մուրադյանը և ուրիշներ։ Պարապմունքները տարվում են բժշկական մեկ տարվա դասընթացների ծրագրով։ Սովորողներն ուսումնասիրում են մաղակազմություն, վիրաբուժություն, ներքին հիվանդությունների բուժում, դեղագործություն և այլ առարկաներ։ Դպրոցում հաճախ պարապմունքներ են անցկացնում նաև Երևանի մասնագետները։

Երիտասարդների էսթետիկական դաստիարակության նպատակով 1960 թ. կեսերին Կիրովականում իր առաջին պարապմունքներն սկսեց հասարակական հիմունքներով երաժշտական դպրոցը, որի ղեկավարությունը սիրով ստանձնեց արվեստի վաստակավոր գործիչ Էդ. Կզարթմյանը։ Առաջին ուսումնական տարում երաժշտական դպրոցն ընդունվեցին բազմապիսի պրոֆեսիայի տեր 100 երիտասարդներ՝ ինժեներներ, տեխնիկներ, բանվորներ և այլն։

Լայն ժողովրդականություն է վայելում Ստեփանավանի կուլտուրայի տանը կից հասարակական հիմունքներով գործող ժողովրդական թատրոնը, որը հայտնի է ոչ միայն Ստեփանավանում, այլև հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս։ «Ստեփանավան քաղաքի ժողովրդական դրամատիկ թատրոնի 32 սիրող-արտիստները,—կարդում ենք «Սովետական Հայաստան» թերթի 1964 թ. սեպտեմբերի 25-ի համարում,—այսօր Կրեմլի թատրոնի տերերն էին։ Նրանք ներկայացրին դրամատուրգ Դ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսը։ Ինքնագործ թատերախմբում հանդես են գալիս տարբեր մասնագիտությունների և ձգտումների տեր մարդիկ՝ հանդերձապահուհին Ն. Շահինյանը և հաշվապահ Ս. Մելիքսեթյանը, արմատուրագործ Ա. Օջուրյանը և մեխանիկ Ս. Դեմիրճյանը... Նրանց բոլորին միավորում է սերը դեպի արվեստը, ստեղծագործությունը։

Ստեփանավանցիների խաղացանկում կա կլասիկ և ժամանակակից հեղինակների մոտավորապես 12 պիես։ Կոլեկտիվը հաճախ իր ներկայացումներով գաստրոլների է մեկնում Անդրկովկասի տարբեր վայրերը»[12]։ Ինքնագործ թատերական արվեստի զարգացման ասպարեզում կատարած բազմամ-

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 328։

12 «Սովետական Հայաստան», 25 սեպտեմբերի, 1964 թ.։

յա բեղմնավոր աշխատանքի և բնակչության սպասարկման գործում ձեռք բերած հաջողությունների համար ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության 1964 թ. նոյեմբերի 4-ի հրամանագրով Ստեփանավանի ժողովրդական թատրոնը պարգևատրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրով[13]։

Լավ է գործում նաև Ջարբախի կուլտուրայի տանը կից հասարակական հիմունքներով կազմակերպված ժողովրդական թատրոնը։ 1964 թ. վերջերին թատրոնի կոլեկտիվը ցուցադրեց «Պեպո» օպերան, որի բեմադրման վրա երկար տարիներ աշխատել է Ա. Հովհաննիսյանը։ Օպերայի լիբրետոն գրել է կուլտուրայի տան դիրեկտոր Մ. Հարությունյանը։ Օպերայի բեմադրության գաղափարը համակեց նաև մի շարք էնտուզիաստների՝ կոմպոզիտորների, երաժիշտների, նկարիչների։ Դերերը, հիմնականում, կատարում են ակումբի ինքնագործ խմբի անդամները, բայց սիրով մասնակցում են նաև պրոֆեսիոնալ դերասաններ Հարություն Քարատջյանը (պետական օպերայից)՝ Պեպոյի դերում, կոնսերվատորիայի երիտասարդ երգչուհի Էլզա Խաչատրյանը (Կեկելի դերում) և ուրիշներ։ Ներկայացմանը մասնակցում են նաև թոշակառու Ս. Յանշաղյանը (Շուշան), փականագործ Հ. Հովհաննիսյանը (Գիքոր), խառատ Խ. Մաղաքյանը (Կակուլի) և ուրիշներ[14]։

1965 թ. փետրվարի 22-ին Երևանում լայն հանդիսավորությամբ բացվեց ժողովրդական ֆիլհարմոնիան, որի կազմում են 17 ինքնագործ լավագույն կոլեկտիվներ, առանձին մենակատարներ, երգիչներ, պարողներ, նվագողներ, ասմունքողներ։ Նոր ֆիլհարմոնիան ունի իր սիմֆոնիկ և կամերային նվագախմբերը։ Ժողովրդական ֆիլհարմոնիան իր համերգները կազմակերպում է հանրապետության քաղաքներում ու գյուղերում։ Աշխատանքները ղեկավարելու համար ստեղծված է գեղարվեստական խորհուրդ, որի ղեկավարն է արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Մ. Մազմանյանը։ Ժողովրդական ֆիլհարմոնիան մինչև ձևավորվելը անցել է երկար ուղի։ Նրա անդամները գեղարվեստական ինքնագործունեության լավագույն խմբերի ներկայացուցիչներն են։ Այժմ մեր հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, կուլտուրայի պալատներում, ակումբներում գործում են գեղարվեստական ինքնագործունեության 837 խմբեր։ 1961—1964 թթ. այդ կոլեկտիվների ուժերով տրվել է 4000 համերգ, որոնց մասնակցել են 730 հազար աշխատավորներ։

Ժողովրդական հազարավոր ինքնագործ կազմակերպություններում, միավորումներում բարձրանում է կոմունիզմ կառուցող աշխատավորների ստեղծագործական ակտիվությունն ու նախաձեռնությունը, նրանք իրենց ունակությունները ի սպաս են դնում կոմունիզմի բարձր գաղափարներին՝ ամեն ինչ մարդուն, հանուն նրա երջանկության։

Ակադեմիկոս Վ. Ա. Օբրուչևն իր «Գիտությունը և երիտասարդությունը» գրքում գրել է. «Պահանջվում է մարդու կյանքը երկարացնել միջին 150—200 տարի, ոչնչացնել վարակիչ հիվանդությունները, մինիմումի հասցնել ոչ վարակիչ հիվանդությունները, հաղթահարել ծերությունը և հոգնածությունը, սովորել անժամանակ և պատահական մահացությունից վերադարձնել կյանքը։ Բնության բոլոր ուժերը՝ արևի էներգիան, բամին, ստորերկրյա ջերմու-

---

13 «Коммунист», 30 декабря, 1964 г.

14 «Սովետական Հայաստան», 6 նոյեմբերի, 1964 թ.։

թյունը ծառայեցնել մարդուն, միջուկային էներգիան օգտագործել ժողովրդական տնտեսությունում՝ արդյունաբերությունում, տրանսպորտում, շինարարությունում։ Նախագուշակել, վերջապես վնասազերծել պատահարները, ջրհեղեղը, փոթորիկը, հրաբխային ժայթքումները, երկրաշարժերը։ Գործարաններում պատրաստել երկրագնդում հանրահայտ բոլոր նյութերը։ Ստեղծել անասունների նոր ցեղեր և արագ աճող բույսեր, որոնք տան շատ միս, կաթ, բուրդ, հացահատիկ, միրգ, փայտանյութեր ժողովրդական տնտեսության կարիքների համար։ Կյանքի համար հարմարեցնել, մշակել անհարմարավետ շրջանները, ճահիճները, լեռները, խոպանը, տայգան, տունդրան և կարող է պատահի նաև ծովի հատակը։ Սովորել ղեկավարել եղանակը, հարմարեցնել կյանքին քամին ու ջերմությունը, ինչպես այժմ հարմարեցվում են գետերը, շարժման մեջ դնել ամպերը՝ ցանկացածի համապատասխան, տիրապետել անձրևին ու պարզ եղանակին, ձյանը և տաքությանը»[15]։

Այս բոլորն ի վիճակի է կատարելու կոմունիզմ կառուցող մարդը։ Նա իր գիտելիքները, ունակությունները նվիրաբերելով կոմունիզմի գաղափարներին, անընդհատ ստեղծագործում ու նախաձեռնում է, կառուցում է նոր մեքենա, հայտնաբերում ավտոմատիկ սարքավորում, բնության ընդերքից կյանքի է կոչում անսպառ հարստություններ։ Մի՞թե այդ գաղափարների շնորհիվ չէ, որ Մեղրու շրջանի կոլտնտեսականները և սովխոզի բանվորները հողի ռացիոնալ օգտագործման, լավ մշակման շնորհիվ միևնույն տարածությունից տարեկան չորս բերք են ստանում։ Նրանք բանջարեղենը ցանում են պտղատու ծառերի միջև ընկած տարածություններում։ Վաղ գարնանը բանջարեղենի բերքը հավաքելուց հետո նույն հողում ցանում են կարտոֆիլ, որը հավաքում են հունիսին։ Այնուհետև դրան փոխարինում է եգիպտացորենը, իսկ վերջում հավաքում են ծառերի բերքը։ 1963 թ. Մեղրիի շրջկենտրոնի կոլտնտեսությունը 15 հեկտար պտղատու այգիների ամեն մի հեկտարից ստացել է 140—160 ցենտներ բանջարեղեն, 140—150 ցենտներ կարտոֆիլ, 500—600 ցենտներ եգիպտացորենի կանաչ զանգված, 50—60 ցենտներ հատիկ, 120—140 ցենտներ դեղձ և այլ պտուղներ[16]։

Նոր մարդու դաստիարակությունը հանդիսանում է կոմունիզմի կառուցման կարևոր խնդիրներից մեկը։ Կուսակցության ծրագիրը այդ կապակցությամբ առաջ է քաշում տվյալ հարցի երկու կողմերը՝ հասարակության անդամների արտադրական ակտիվության բարձրացումը և նրանց մեջ կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը։ Մեր կյանքի տարբեր բնագավառներում օրեցօր ծնունդ են առնում նոր նախաձեռնություններ։ Սիսիանի շրջանի Բռուն գյուղի սովխոզի կոմերիտականները 1963 թ. մայիսի 23-ի ժողովում որոշում են իրենց ուժերով հասարակական հիմունքներով կառուցել ակումբ։ Ընտրում են նախապատրաստական կոմիտե, որի կազմի մեջ են մտնում Ա. Ասրյանը, Ա. Մինասյանը և Ա. Այգաղյանը։ Առաջինը ակումբի կառուցման համար աշխատանքի են դուրս գալիս կոմերիտականներ Հ. Առաբելյանը, Կ. Վանեսյանը, Ռ. Բալայանը, Յու. Մանվելյանը, Ռ. Ադոնցը և ուրիշներ։ Շուտով երիտասարդ էնտուզիաստներին օգնության են հասնում նաև գյուղի ծերերը՝ Տ. Ամարյանը, Մ. Հովակիմյանը, Բ. Վալենցյանը։ Որմնադիր-

---

15 А. Норыш, Твой труд и коммунизм, Москва, 1964, стр. 91—92.

16 «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի, 1964 թ.։

ներ Գ. Առաքելյանը, Մ. Սեթյանը խոստանում են անվճար կատարել ակումբի քարային աշխատանքները։ Նույնանման պարտավորություններ են վերցնում նաև հյուսներ Ջ. Առաքելյանը և Մ. Վանեսյանը[17]։

Երբ Բրատսկի հիդրոէլեկտրակայանի շինարարությունում ուժեղ սառնամանիքներ են սկսվել, ադմինիստրացիան մոնտաժող բանվորներին թույլ է տվել աշխատանքի դուրս չգալ, բայց լրիվ ստանալ տվյալ օրերի աշխատավարձը։ Բանվորները պատասխանել են. «Բայց մի՞թե բանը դրամի մեջ է»։ Եվ բոլորը դուրս են եկել աշխատանքի[18]։ Նովոսիբիրսկի «Կոմունար» գործարանի երիտասարդ բանվոր Ֆեոդոր Սիզոնենկոն անհանգստանալով մեծ քանակությամբ խոտանի համար, առաջարկություն է մտցրել կատարելագործել շիֆերի արտադրության տեխնոլոգիան, սակայն գլխավոր ինժենները չի ընդունել այդ առաջարկը, պատճառաբանելով, որ դրա համար չկան անհրաժեշտ միջոցներ։ Այնուհետև նա և իր ընկերները առաջարկում են առանց լրացուցիչ վարձատրության պատրաստել նախագծերը և տեղադրել գործիքները։ Բայց այս անգամ նույնպես նրանք չեն ստանում համաձայնություն։ Դրանից հետո Սիզոնենկոն գործարանի դիրեկտորին գրում է. «Վերադարձնում եմ ինձ փոխանցած 244 ռ. պարգև-վարձատրությունը, հրաժարվում եմ ստանալ պարգև-վարձատրություն նաև հետագայում, մինչև որ արտադրամասի և լաբորատորիայի ղեկավարությունը միջոցներ չձեռնարկի և չվերացնի խոտանը։ Խնդրում եմ այդ գումարը օգտագործել խոտանի պատճառով տրված վնասը մասնակիորեն հատուցելու համար[19]։

«Հասարակական հիմունքներով մանկական սենյակ»,—այսպես է կոչվում Երևանի Մյասնիկյանի անվան փողոցի № 15 տան շենքի առաջին հարկում բացված Սպանդարյանի շրջանի միլ. բաժանմունքի հասարակական հիմունքներով մանկական սենյակը, որը սկսել է գործել 1964 թ. ամռանից։ Այստեղ վատ վարքի երեխաների դաստիարակությունը իրենց վրա են վերցրել հասարակական աշխատողները՝ մանկական սենյակի արտահաստիքային տնսուչները, քաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ձեռնարկությունների առաջավոր բանվորները, դպրոցների բարձր դասարանների աշակերտները[20]։

Ալյումինի գործարանի կոլեկտիվի անդամների կարգապահությունը ամրապնդելու, նրանց մեջ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք պատվաստելու գործում կարևոր դեր է կատարում «դաստիարակչական դիսպետչերականը»։ Ամեն շաբաթվա հինգշաբթի օրը գործարանի դիրեկտորի առանձնասենյակում հրավիրվում է «դաստիարակչական դիսպետչերականի» նիստը, որին մասնակցում են գործարանի բաժինների վարիչները, արտադրամասերի պետերը, բրիգադիրները, կուսակցական, արհմիութենական և հասարակական կազմակերպությունների ակտիվիստները, առաջավոր բանվորները։ Քննարկվում են աշխատանքային կարգապահության խախտման, հակահասարակական և այլ երևույթների վերաբերյալ հարցեր։ Այստեղ կոլեկտիվ կերպով քննության է առնվում այն մարդկանց վարքագիծը, որոնք իրենց վաստ-

17 «Ավանգարդ», 10 օգոստոսի, 1963 թ.։

18 А. Иорыш. Твой труд и коммунизм, М., 1964, стр. 62.

19 Նույն տեղում։

20 «Երեկոյան Երևան», 15 հուլիսի, 1964 թ.

են դրսևորում հասարակական միջավայրում, տանը, արտադրությունում։ Քննարկման ընթացքում առաջարկվում է դիրեկցիային և արտադրամասերի պետերին՝ այս կամ այն աշխատողին իջեցնել ցածր պաշտոնի, նկատողություն կամ զգուշացում հայտարարել, իսկ առանձին դեպքերում նույնիսկ վարչական տույժի ենթարկել։

Նոր մարդու դաստիարակությունը տեղի է ունենում ոչ միայն կուսակցության, սովետական պետության, արհմիությունների, կոմերիտմիության և մյուս կազմակերպությունների, այլև հասարակության ամբողջ կյանքի ու կացութաձևի ներգործության միջոցով։ Մարդկանց դաստիարակմանը նպաստում են արտադրության հանրային եղանակը, ըստ աշխատանքի վարձատրության սկզբունքը, հասարակական-քաղաքական գործունեությունը, իրավական նորմաները և այլն։ Կուսակցությունը մարդկանց կոմունիստական գիտակցության բարձրացման համար օգտագործում է էկոնոմիկական, սոցիալ-կենցաղային, քաղաքական, իրավական բոլոր լծակները։ Մարդու նկատմամբ հարգանք և վստահություն ցուցաբերելը հանդիսանում է աշխատավորների կոմունիստական դաստիարակության կարևորագույն սկզբունքներից մեկը։ Մեր կյանքի բոլոր բնագավառներում ստեղծվում են պայմաններ մարդկանց դաստիարակելու՝ միմյանց նկատմամբ հարգանքի և վստահության սկզբունքներով։ Կուզնեցկի մետալուրգիական կոմբինատի բազմաթիվ արտադրամասերում բանվորներն աշխատավարձը ստանում են առանց գանձապահի, առանց վաճառողի են աշխատում բուֆետները և թերթի կրպակները, գործում են հասարակական գրադարաններ և այլն[21]։

Աշխատավորների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ մեծ աշխատանք են տանում հասարակական հիմունքներով գործող զեկուցողների խմբերը։ Հանրապետությունում գործում են 180 այդպիսի խմբեր։ Լենինյան շրջանում զեկուցողների խմբերի թիվը հասնում է 46-ի, որոնցում ընդգրկված են 500 դասախոսներ, այդ թվում՝ 277 ինժեներներ, 72 տնտեսագետներ, 75 մանկավարժներ, 80 այլ մասնագետներ։ Շրջկոմի դասախոսական խմբի ուժերով բացի դասախոսություններից սիստեմատիկաբար կազմակերպվում են գիտա-արտադրական կոնֆերանսներ։ Այդպիսի կոնֆերանսներ են կազմակերպվել, օրինակ, «Լատեքսների կիրառումը կոշիկի արտադրության մեջ», «Ոսկու ձուլման նոր տեխնոլոգիան», «Կոմունիստական դաստիարակության խնդիրները ներկա էտապում» և այլ թեմաներով։

Բացի քաղաքական ուսուցման կազմակերպումից, հասարակական աշխատողները ակտիվ աշխատանք են տանում բանվորների տեխնիկական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Շրջանում, օրինակ, 1963 թ. գործում էին 375 տեխնիկական մինիմումի խմբակներ, որոնցում ընդգրկված ավելի քան 5 հազար բանվորներ, ինժեներների, տնտեսական ղեկավար աշխատողների օգնությամբ ուսումնասիրում էին արտադրության տեխնիկան ու տեխնոլոգիան, տիրապետում մեխանիկային ու ավտոմատիկային։

Բանվոր-ծառայողների քաղաքական, տեխնիկական մակարդակի բարձրացումը մեծապես նպաստեց արտադրության, զարգացմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, ռացիոնալիզատորության և գյուտարարության լայն ծավալմանը։ Այդ է պատճառը, որ Լենինյան շրջանը 1963 թ.

---

21 Вопросы истории КПСС, № 2, 1963, стр. 64.

համախառն արտադրանքի պլանը կատարեց 103,4 տոկոսով, պետությանը տալով միլիոնավոր ռուբլիների արտապլանային արտադրանք։

ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան (1963) որոշումներից ելնելով, «Պոլիվինիլացետատ» գործարանում ստեղծվել է կոմունիստական աշխատանքի 50 դպրոցներ, որտեղ ունկնդիրները արտադրության կոնկրետ հարցերից բացի ուսումնասիրում են կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի նորմաները, առաջավոր կոլեկտիվների աշխատանքի փորձը։ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում այդպիսի դպրոցների թիվը հասնում է 71-ի։ Երկրորդ տարին է, որ Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում գործում է վարպետների դպրոց, որի նպատակն է բարձրացնել վարպետների դերը բանվորների քաղաքական դաստիարակչական աշխատանքներում, նրանց հաղորդել տեսական և պրակտիկ գիտելիքներ։

Նոր մարդու դաստիարակման գործում կարևոր դեր են կատարում գրադարանները, որոնք տնօրինում են հոգևոր ներգործման այնպիսի միջոցի, ինչպիսին է գիրքը։ Գրադարանները մոտ են կանգնած մարդկանց, օգնում են նրանց մեջ ձևավորելու հոգևոր ու գեղարվեստական ճաշակ, նրանց են հաղորդում բազմապիսի գիտելիքներ ու հարուստ փորձ։ Մարդկանց դաստիարակության, նրանց մեջ գրքի պրոպագանդան լավագույն ձևով կազմակերպելու գործում, մասսայական գրադարանների հետ միասին, լուրջ աշխատանք են ծավալել ռեսպուբլիկայում հասարակական հիմունքներով գործող 70 գրադարանները։

Առաջին հասարակական գրադարանը ծնվել է Երևանի Նոր-Արեշ թաղամասի № 11 մասսայական գրադարանի վարիչ Հ. Հակոբյանի և թաղային կոմիտեի նախագահ Ա. Մանուշյանի նախաձեռնությամբ 1963 թ.։ Հասարակական գրադարանին է տրամադրում 36 ք. մ. տարածությամբ իր սենյակը Նոր Արեշի № 19 փողոցի № 11 տան բնակիչ Ք. Արթենյանը, որը և հանդիսանում է գրադարանի վարիչը։ Սկզբնական շրջանում լուրջ դժվարությունների առաջ են կանգնում գրքային ֆոնդի կոմպլեկտավորման գործում։ Սակայն էնտուզիաստներին հաջողվում է մի շարք կազմակերպություններից և քաղաքացիներից հավաքել 2838 կտոր գրականություն՝ 1928 հայերեն, 910-ը ռուսերեն։ Գրադարանին գրականություն են նվիրում մեր ռեսպուբլիկայի անվանի մարդիկ՝ գիտնականներ, պարտիական և սովետական աշխատողներ։ Մամուլի բաժանորդագրության նպատակով նվիրատվությամբ հավաքված գումարի հաշվին գրադարանը ստանում է 13 անուն թերթ և ամսագիր։ Բացի դրանից թաղամասի շատ բնակիչներ իրենց ստացած թերթերը և ամսագրերը ընթերցելուց հետո նույնպես հանձնում են գրադարանին։ Գրադարանի հանդիսավոր բացման նպատակով կազմակերպվում է բնակիչների ընդհանուր ժողով, որտեղ ընտրվում է գրադարանի վարչություն բաղկացած 7 հոգուց։ Աստիճանաբար հասարակական գրադարանի գրքային ֆոնդը ավելանում է։ Այժմ գրադարանն ունի մոտ 400 կտոր գիրք և 350 ընթերցողներ։

Հասարակական հիմունքներով գործող գրադարանների առաջնեկներից է նաև Լենինականի էլեկտրակայանի շենքում կազմակերպված գրադարանը, որն ունի շուրջ 600 կտոր գիրք և ավելի քան 600 ընթերցող։ Հասարակական գրադարանի աշխատանքներում ներդրվել է մի շատ կարևոր մեթոդ, դա անձնական գրադարանների հետ սերտ կապի ստեղծումն է։ Հասարակական աշխատողները գտնում են անձնական գրադարանների մասսայական օգտագործման

ուղին։ Օրինակ, Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի գրադարանում կա անձնական գրադարանների ֆոնդերի հասարակական օգտագործման քարտարան[22]։

Հասարակական գրադարանը, ինչպես նշված է հասարակական գրադարանների Օրինակելի կանոնադրության մեջ[23], հանդիսանում է սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության, բնակչության գրքով սպասարկելու գործում հասարակության մասնակցության գործոն ձևերից մեկը, որ պետք է լայնորեն տարածել ու կատարելագործել։

Այսպիսով, հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունները կարևոր դեր են կատարում կոմունիզմ կառուցող մարդու բազմակողմանի դաստիարակման գործում, նպաստում նրա աշխատանքային ակտիվության բարձրացմանը, հոգևոր աճին։

А. А. Садагян

РОЛЬ ОРГАНИЗАЦИЙ НА ОБЩЕСТВЕННЫХ НАЧАЛАХ В ДЕЛЕ ВОСПИТАНИЯ НОВОГО ЧЕЛОВЕКА

Резюме

Одной из основных задач строительства коммунизма является всестороннее воспитание нового человека. Постепенное перерастание социалистических производственных отношений в коммунистические, социалистической государственности в коммунистическое общественное самоуправление происходят параллельно со всесторонним развитием нового человека.

Сердцевиной идеологической работы является трудовое воспитание. В труде выявляется творческая активность масс, их стремление к продвижению вперед. Хорошие качества, знания и умения людей складываются в процессе их общественно-хозяйственной деятельности. Этому способствуют профсоюзы, комсомол, кооперативы, культурно-просветительные объединения, советы и их постоянные комиссии, производственные совещания и другие организации.

В деле всестороннего воспитания нового человека большую роль также играют многочисленные самодеятельные народные организации на общественных началах: народные университеты, театры, филармонии, общественные аспирантуры, библиотеки, лекторские группы и т. д.

В статье на основании многих примеров и фактов, взятых из жизни республики, обобщается деятельность организаций на общественных началах в деле воспитания нового человека.

---

22 Այս հարցերի մասին ս.ե՛ս «Հասարակական հիմունքները գրադարանային գործում» 1963 թ.։

23 Նույն տեղում, էջ 23։